

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

«Եւ յեկիի խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն».

Ղուկ. Բ.—14.

Քսան դար շարունակ Քրիստոսի ս. Ծննդեան օրից մինչև այժմ քրիստոնէական եկեղեցիներում հնչւում է խաղաղութեան և հաշտութեան երկնային պատգամը՝—որ լինի երկրի վրայ խաղաղութիւն եւ մարդկանց մէջ էլ հաշտութիւն, բայց դժբախտաբար երկնաւոր զօրքերի բազմութեան միջոցով հնչեցրած աստուածային այդ գեղեցիկ պատգամը մինչև այժմ երկրաւոր զօրքերի ու զօրապետների սրտերի մէջ իրական հող չգտաւ, այլ իբրև լոկ ձայն հնչուեցին և ակիքածև տարածուելով՝ կորան օդի մէջ:

Քանի քանի հանճարեղ գրողներ իրենց գեղեցիկ գրութեանքներով աշխատել են մարդկութեան համոզել, թէ ինչ սոսկալի աղէտներ են պատճառում մարդկութեան աւերիչ պատերազմը, քանի հանճարեղ քարոզիչներ եկեղեցու բեմից քարոզել են սիրել խաղաղութիւնը և հեռու մնալ պատերազմից, քանի աշխարհահռչակ նկարիչներ, ինչպէս Ռուսաց հանճարեղ նկարիչ Վերեշչագինն իւր զանգերի կոյսի նկարով, աշխատել են տեսանելի կերպով ցոյց տալ պատերազմի սոսկալի հետևանքները, բայց մինչև այժմ էլ այդ հանճարեղ քարոզիչների խօսքերը, իբրև ձայն, կորան օդի մէջ, իսկ գրողների և նկարիչների գրքերն ու նկարները մնացին և ծառայեցին իբրև զարդ գրադարանների ու թանգարանների:

Աստուած իմ, ի՜նչ է կատարուում այս ըրպէիս ամբողջ մարդկութիւնից վկայուած «քաղաքակիրթ» Եւրոպայում: Ազգերը խառնուել են և դուրս են եկել իրար դէմ աւելի կատարելագործուած զէնքերով իրար կոտորում ոչ միայն ցամաքի և ծովի վրայ, այլ բարձրացել են ու երկնքում ևս կուռւմ և կամ այնտեղից—հեռաւոր բարձրութիւնից հաշիւ տեսնում երկրի վրայ գտնուած իրենց թշնամիների հետ: Մի խօսքով իւր զարգացման զագաթնակէտին հասած տեխնիքան միջոց է տալիս մարդուն միմեանց կոտորել աւելի մեծ քանակութեամբ թէ՛ երկրից և թէ՛ երկնքից: Կատարոււմ է այժմ ուրեմն միանգամայն հակառակը, քսան դար առաջ երկնային զօրքերի բազմութիւնն էր երկնքից «խաղաղութիւն երկրի վրայ» պատգամը առաքում ներքև երկրի վրայ ապրողներին, իսկ քսան դար յետոյ երկնքից Խրիստոս զօրաց բազմութիւնն է ուղարկում պայթուցիկ նիւթեր զէպի երկիր մարդկանց մէջ: «Յառաջագիմութիւնը» մեծ է.....

Ճիշտ այս ըրպէիս կարծես կատարուել է Աւետարանի խօսքը. «Զի յարիցէ ազգ յազգի վերայ, և թաղաւորութիւն ի թաղաւորութեան վերայ»: Աւետ. Դուկ. ԺԳ—8.

Ո՞վ խառնեց աշխարհը, ո՞վ պատճառ եղաւ Եւրոպայի սոսկալից արիւնհեղութեան՝ այլ ևս կասկածից դուրս է և ամենքի համար պարզ է՝ որ տեղծոյնների ցեղի սին փառքով և զոռ հպարտութեամբ յղփացած Վիլհելմ կայսրն իւր զաշնակից Աւստրիայի հետ:

Մեծն Ռուսաստանի, մեր ընդհանուր հայրենիքի խաղաղարար Նորիկ Մեծոքիւն Նիկողայ Բ. Կայսրն շարունակ աշխատել է խաղաղութեան մէջ պահպանել ոչ միայն խաղաղասէր Ռուսաստանը, այլ և «Համազայի խաղաղութեան Կոնֆերենցիան» հաստատելով՝ աշխատել է միւս պետութիւններին էլ շարունակ ներգնչել խաղաղութեան ժե՛ծ գաղափարը և հրաւիրել նրանց խաղաղութեան միջազգային օրէնքներով պետութեանց մէջ ծագած թիւրփոխացութեանց և խռովութեանց վերջ դնել, Բայց ծածուկ չէր ամբողջ աշխարհից, որ 45 տարի խաղաղասէր Ռուսաստանի հա-

րեան Գերմանիան՝ շարունակ սպառնալիսուելով՝ վերջին տարիներս գոռոզութեամբ և մեծութեամբ արբեցած Վիլհելմ կայսեր գլխաւորութեամբ սպառնում էր մի օր խանգարել իրենց հարեան պետութիւնների խաղաղ կեանքը:

Այդ ճակատագրական ժամը հասաւ և Վիլհելմ Բ. կայսրը յանդուգն համարձակութեամբ իւր զաշնակից Աւստրիայի հետ պատերազմ յայտարարեց խաղաղ Ռուսաստանին անցեալ յուլիսի 19-ին:

Մեծ փորձութիւնը մեծ փորձիչի ձեռքով զրուած էր մեր խաղաղարար Մեծն Ռուսաստանի ժողովրդի և նորա հաւատարիմ հպատակների առաջ:

Եւ ուսս ժողովուրդը, ու Մեծն Ռուսաստանի բոլոր հաւատարիմ հպատակները բոլորէապէս կարծես մի շունչ և մի մարմին դառած, զգալով մօտալուտ լուրջ վտանգը, որոշեցին յանուն իրենց Հայրենիքի պատուի՝ դէմ ելնել և թոյլ չտալ իրենց յանդուգն թշնամուն ոտք կոխել Ռուսաստան:

Հայ ժողովուրդն այս անգամ ևս ցոյց կը տայ իւր պատմական հաւատարիմ ծառայութիւնը և ամեն կերպ կրնապատի Ռուսաստանի յաղթութեան: Հայ զինուորը մարտի հրաւէրը ստանալուն պէս թողեց իւր զաշտն ու այգին, իւր սիրելի ծնողն և շնատնիքը ու վազեց մտաւ ուսս զօրքերի շարքը պաշտպանելու Հայրենիքը արտաքին թշնամուց:

Հայոց Հայրապետը, ազգիս Վեհափառ Տ. Տ. Կէրօզ Ե. Կաթողիկոսը՝ տեսնելով իւր հոգեւոր զաւակների աչք սրտ տեսնող ծառայութիւնը իւր շրջաբերական կոնդակի մէջ ասում է. «Միխիթարիմք յոյժ, զի հոգեւոր որդիք Մեր յամենայն կողմանց առանձին ոգեւորութեամբ և ազնւութեամբ կատարեն զպետական և զքաղաքացիական պարտականութիւնս իւրեանց, հոգւով և սրտով մասնակից լինելով պաշտպանութեան ընդհանուր հայրենեաց և փառաց նորա»:

Վեհափառ Հայրապետն իւր Հայրական կոնդակով յորդոր է կարգում իւր հոգեւոր զաւակներին «նիւթապէս և բարոյապէս օժանդակել համապետական մեծ և արդա-

բացի գործի յաջողութեան»։ Յորդոր է կարգում եղբայրական օգնութեան մարդասէր գործը կազմակերպել օգնելու պատերազմի դաշտը դնացած զինուորների անօգնական ընտանիքներին։ Յորդոր է կարգում որ իբրև Սամարեցիներ օգնութեան հասնենք պատերազմի դաշտում բժշկութեան և խնամքի կարօտ վիրաւորներին, որոնք իբրև Հայրենիքի պարտաճանաչ զաւակներ, իրաւունք ունեն սպասելու իրենց եղբայրներին և քոյրերին սիրտփանք և մխիթարանք։

Թող ուրեմն Վեհափառ Հայրապետի հայրական յորդորն արձագանք գտնի բոլորիս սրտերում՝ կատարելու մեր սրբազան պարտքը առ ընդհանուր Հայրենիքն և առ զէնքի կոչուած մեզ պաշտպանող եղբայրներն։

Թող Մեծագոր խաղաղաբար Նուբին Մեծուքիւն Նիկոլայ Բ. Կայսրն իւր քաջամարտիկ զինուորներով ամօթահար դարձնէ իւր հպարտ և յանգուզն թշնամուն, թող պատերազմի արհաւիրքներից սարսափած Եւրոպան ազատուի ծանր մղձաւանջից և իրականանայ ընդմիշտ ամենուրեք «Եւ յերկիր խաղաղութիւն, ի մաքուրիկ հաճութիւն» երկնային խաղաղութեան սուրբ պատգամը։

ԲԱՐԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

12 օգոստոսի 1914 թ.